

(էջ 48-49) Յակոբ քհյ. Ամասիացիին ձեռագիր պատմութենէն (այժմ կորսուած) առնելով կը յիշէ Սալահէտտինի կողմէն Ս. Յակոբայ եկեղեցիին գրաւման, և վերստին շնորձման պարագաները զոր մէջ կը բերենք հեղինակին գրչութեան ոճովը. «Արդ՝ երբ ժամանակ որ Սալահէտտին Սուլթանը Երուսաղէմ կը մօտենայ, դեռ քաղաք չի մտած հեռուէն մեր Սուրբ Յակոբայ տաճարին փառաւոր գմբէթը եւ անոր հսկայաշինութիւնը տեսնելով՝ կը կարծէ թէ էօմէրին մզկիթն է, և իսկոյն երկրպագութիւն մատուցանելով փառք կու տայ Արարչին՝ որ իր ձեռօքը յաղթութիւն տուաւ և արժանացաւ Սուրբ Երկրին տիրապետելու եւ Սէյրէթուլահը տեսնելու: (Ըստ որում մինչեւ ցայսօր քաղաքը չի մտած ի հեռուած կ'երեւի մեր հսկայաշէն վանքը. քանզի ոչ միայն մերձ է դրան Եաֆայի եւ աշտարակին Դաւթի, այլ չի կայ քաղաքին մէջ անոր պէս մեծակառօց եւ մեծադիր շէնք մը. նա մանաւանդ գեանի բարձր դիրքովն ալ երեւելի ձեւացուցած է տաճարը, որովհետեւ Սիոն լեռան վրայ կառուցուած է): Բայց երբ ժամանակ որ քաղաքէն ներս կը մտնէ՝ կը տեսնէ որ խորուած է՝ և իր կարծիքը պարսպ. ուստի անոր երկիրպագութիւն մատուցանելով աղօթելուն (նամազի կայնելուն) համար, զայրանալով կը հրամայէ նոյն ժամանակի Հայոց հայրապետին՝ (որ Երուսաղեմի Աբրահամ պատրիարքն էր) որ կամ վանքը ձգեն ու զուրս ելնեն որ մզկիթ դարձնէ Մաբ Եագուպը, և կամ եթէ յանձնառու չըլլան՝ հիմնայատակ պիտի ընէ մանասթըրը: Յայնժամ երանելի հայրապետը իր բոլոր միաբանութեամբը ու ժողովրդովը ճիշ կը բառնան և ազիողորմ արտասուօք Սուլթանին ոտքը կը փարին գոչելով և պաղատելով՝ որ ողորմի եւ խնայէ վանքը ու իրենց պարգեւէ: Նոյնժամոյն բարկութենէն փոքրով զիջանելով՝ վերստին կը հրամայէ որ գոնէ հրամանը տեղը գտնելու համար տաճարին գմբէթը իջեցնեն ի խոնարհ, իսկոյն զիջանելով այս որոշմանը՝ կը քակեն կաթողիկէն (կամ նոյն է գագաթն կամ սկաւառակն Ս. Յակոբայ տաճարին), որով և կը հանդարտի փոքր ինչ յաղթողին սիրտը, եւ կը պատուիրէ որ մէյ մ'ալ գմբէթը չի բարձրացնեն. ըստ որում կ'ըսէ ինձմէ ետքը եկողները, կամ եղելութիւնը իմանալով, կամ տաճարին փառքը տեսնելով՝ յայնժամ կամ ձեռուընուզ կը յափշտակեն եւ կամ հիմնայատակ կ'ընեն. այս ըսելով